



Հ Ա Վ Ե Ր Ժ Ի Ծ Ա Մ Փ Ո Վ

Ծեր էր ու անկար:

Պետք ուներ օգնության:

Նաև պատրաստ էր օգնելու:

Մի կին էր, որ ապրել էր մեկ դարից մի քիչ ավելի:

Որդիներ էր ծնել: Տքնումով պահել ու անել, որոնք թռչունի ձագերի նման, երբ թև էին առել, թռել գնացել էին: Նոր բարդի էին գտել: Նոր բույն հյուսել: Եվ մոռացել էին իրենց մորը, որ իրենց ձագերն էլ նրանց մոռանա:

Մայրը հին, անհայտ մատուռի նման խարխուլվել էր ու մոռացվել:

Դարձել էր գոսացած, կիսակենդան մի կրճղ, որ արմատներ ունի թեև հողի մեջ, բայց ճյուղեր չունի:

Ամեն առավոտ և երեկո, ժամերգությունը սկսելուց մի կես ժամ առաջ, ծուռտիկ ձեռնափայտին հենված, երբուն ու անհաստա սառ քայլերով գալիս էր եկեղեցի:

Կարճուտն էր ու փոքրամարմին՝ գանձան եղևնու նման:

Հագուստը՝ հնամաշ, հնաբույր:

Եկեղեցու գավթում, մուտքի մոտ, ծալապատիկ նստում էր մաշված, տեղ-տեղ պատտոտված կարպետին՝ գլուխը վեր, ձիգ ու զգաստ, ինքնատույզ, մտասևեռ:

Աչքերը չէին տեսնում: Հետզհետե մաշվող, սպառվող մոմի նման տարիները խլել էին նրա աչքերի լույսը՝ թողնելով միայն մոխիր ու մշուշ:

Ականջներում բոլոր ձայներն ու շշուկները աղմուկ էին դառնում, անհետանում:

Նա երբե՛ք ձեռք չէր մեկնում ողորմություն խնդրելու:

Երբե՛ք չէր ասում ընդունված կարգով.

— Ողորմացեք թվշտիս:

Ոչ ոքի գույթը չէր փորձում կեղծ կամ անկեղծ աղերսներով շարժել:

Ընդհակառակը:

Աշխատու՛ր էր կարծես ցույց տալ, թե ինքը այնքան էլ վատ փնակի մեջ չէ:

Նստում էր լուռ, ուղիղ ու անշարժ:

Իբրև բողո՛ք:

Պահա՛նջ որպես:

Զգվում էր տեղում և անլույս, պղտորված աչքերով անթարթ նայում էր անորոշ մի տեղ:

Նրա անարյուն, չորացած շուրթերին միշտ անվերժանելի հնչյուններ էին թրթոռում:

Աղոթո՞ւմ էր արդյոք:

Մարդկա՛նց օրհնում:

Թ՞ե—

Անիծում էր իր անուրախ կյանքը և մեկ էլ՝ երջանիկներին:

Այդ համառ, ամուր սեղմված շուրթերից, բարի խորշումադեմք պատավից դժվար թե անե՞ծք դուրս գար:

Անե՞ծքը անգորի գեղքն է:

Մինչդեռ նրա անգորության մեջ մեծ գործողություն կար:

Դարս-դարս կնճիռները դեմքին, կարծես երկաթագիր մագաղաթների տողեր լինեին՝ պարզ ու դյուրընթեռնելի:

Ծերմակած, ևսրացած մազերից մի քանի ցաք ու ցրիվ թելեր սովորաբար միշտ դուրս պրծած էին լինում գլխաշորի տակից ու հովից մեղմորեն—կարկտահարված արտի հատ ու կենտ հասկերի նման—թրթոռում նրա անշարժ, քարացած դեմքին:

Չիներ այդ աննշան շարժումը՝ կկարծվեր թե պղնձագույն ժայռեղեն սպասածից հանճարեղ արվեստագետի ձեռքով թեթևորեն ուրվագծված արձան է:

Մեռած էր այդ կինը մարմնապես:
 Բայց ոգին արթուն էր, կենդանի:
 Խարիված, տկարացած մարմինը շնոր-
 հիվ առողջ ու կենսունակ ոգու՝ կարողանում
 էր ներգործել. հարգանք, անգամ ակնածանք
 կորզել: Կարողանում էր իր չափած խոսքը,
 որ պիտի ճշար մի օր—լուեչայն ասել:
 Կոթողացած տրտունջ էր:

Ու
 Լոռույան ահարկու ճիչ:
 Հատ ու կենտ տարեց հավատացյալներ,
 մեծ մասամբ կաղ, կյանքից զրկվածներ—
 նրան տալիս էին երբեմն կոպեկներ:
 Նա չէր փոխում դիրքը:
 Ձեռք չէր երկարում:

Գողը նետվող կոպեկների չխլոցը արձա-
 գանք չէր գտնում նրա հոգում:
 Շրջապատի նկատմամբ անհողորդ էր:
 Սակայն—
 Ոչ անտարբեր:
 Ամեն օր, մտանց թերացման, գալիս էր ե-
 կեղեցի:
 Գալիս էր աղոթելու:
 Ապրելու:

Բայց քանի որ եկեղեցին անմարդ էր լի-
 նում ու իր նման լքված—ապրելը նրա հա-
 մար դառնում էր անչափ դժվար:
 Արտաքնապես լքված եկեղեցին, որ հա-
 մեատ ու անշուք մի շինություն էր—խորհուրդ
 ուներ իր մեջ: Հանճարի դրոշմ: Եվ ուներ
 ոգի հավերժող: Ջորեղ, չմեռնող խորհուրդ՝
 անթերված կրակի նման այրելու, արթնա-
 նալու պատրաստ:

Իմաստության բորբոս կար խորաններում
 բազմած: Եվ կար կաթնասերի նման քերվող
 գաղափար—լույսի պես պայծառ ու լույսի
 նման անորսալի: Կար հաշիշի պես թմրեց-
 նող խնկաբույր ծուխ. հնօրյա, առինքնող,
 արբշիտ բուրմունք: Եվ կային կանթեղներ
 անհամար: Չափեր կայծկլտացող: Շրագներ՝
 անկրակ: Մոմեր անմար, թախճոտ—ինչպես
 մատաղացու ոչխարի աչքեր, որոնց հավեր-

ծափալ, դեղնկոտ ցուլերի ներքո մարդիկ
 ստեղծվածներ են արարել: Հրաշքներ հորի-
 նել: Տեսիլքներ կերտել: Երկնել երազներ—
 մեր խաչված, չարչարված Աստծուն անմա-
 հույան խորհուրդը մեկնելով—որ խաչվե-
 լով անմահանա Աստվածը և որ ստեղծելով,
 անգամ հատվելով, թաղվելով հարստունք
 և՛ մեք...

Եկեղեցին և կինը մարմնապես մեռնում
 էին—մայրամուտ թեքվող արևի, սպառվող
 ճրագի, այրվող, վերջացող խունկի նման:

Բայց պահպանել էին անտես, զորավոր
 ոգին, որ անշոշափելի էր թեև բոցի նման և
 հեռց նույն բոցի պես էլ այրող, զգալի:

Այդ կինը և եկեղեցին գալիս էին վաղըն-
 ջական դարերից իրենց երկար, փոշոտ ու
 փշոտ ճամփին կորցրել էին շատ բան—բաշ-
 խել առատորեն, որ կյանքում լույս լինի, իսկ
 լքված սրտերում՝ հույսի նշույլներ: Որ կյան-
 քի շատ դառնությունների հետ քիչ էլ քաղ-
 ցրություն լինի: Որ վշտոտ հառաչանքնե-
 րին ժպիտների բեկորներ շաղախված լի-
 նեն: Որ խեղդիչ տխրության տեղատարափ
 հեղեղներից հետո, քիչ էլ ծիծաղի թարմա-
 շունջ ցող իջնի: Որ բբաբեր, ձյունոտ փոթո-
 րիկներից հետո նաև խնդության արփալույս
 լինի: Որ անդադար, հոգնատանջ, տատա-
 պալից աշխատանքներից հետո հանգստու-
 թյուն լինի: Արյունահեղ, ավերիչ ու անվերջ
 պատերազմներից շնչահատ մարդը քիչ էլ
 խաղաղություն ճաշակի: Եվ վերջապես, որ
 կյանքը կյանք լինի և ոչ թե չարչարանք:

Եվ հիմա նրանք սուկ իրենց ոգիների
 փոխադարձ ներդաշնակումով, լրացնելով
 մեկը մյուսին, ձուլվելով միմյանց երբեմն
 խարիսպիելով, երբեմն սրընթաց—չարու-
 նակում էին իրենց հավերժի ճամփան...

Չէ որ հաճախ գոսացած կոճղերից անգամ
 դալարագեղ ծառեր են բուսնում...

ՍԱՍՈՒՆ ՍՐԿ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
 (Բ լսարան)

